ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հոկտեմբերի 3-5-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արմեն Արզումանյանի Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արմեն Արզումանյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, 2022թ. հոկտեմբերի 3-5-ը

4. Հրավիրող կողմը՝

Լյուքսեմբուրգի Առևտրի պալատ

5. Գործուղման նպատակը՝

Ս.թ. հոկտեմբերի 4-ին Հայաստանի և Լյուքսեմբուրգի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ Լյուքսեմբուրգի Առևտրի պալատը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Նիդերլանդների Թագավորությունում ՀՀ դեսպանության հետ համատեղ հյուրընկալել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արմեն Արզումանյանի գլխավորած պատվիրակությանը՝ սեմինար և B2B ձևաչափով հանդիպումներ անցկացնելու համար:

6. Քննարկված թեմաները՝

Գործարար համաժողովին բացման խոսքով հանդես են եկել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արմեն Արզումանյանը և Լյուքսեմբուրգի Առևտրի պալատի միջազգային հարցերով տնօրեն տիկին Սինդի Տերեբայը: Պարոն Արզումանյանն իր խոսքում անդրադարձել է հայ–լյուքսեմբուրգյան առևտրատնտեսական համագործակցությանը, վերջինիս ընդլայնմանը և խորացմանը: Օրակարգով

նախատեսված B2B հանդիպումների ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալն ունեցել է մի շարք գործնական քննարկումներ Լյուքսեմբուրգի բիզնես համայնքի ներկայացուցիչների հետ:

Համաժողովին մասնակցել են հայ և լյուքսեմբուրգյան ֆինանսական, խորհրդատվական, ապահովագրական, տեքստիլ, արդյունաբերական ընկերություններ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում պարոն Ա. Արզումանյանը հանդիպում ունեցավ Լյուքսեմբուրգի էկոնոմիկայի նախարար Ֆրանց Ֆայոյի հետ: Նշված հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են երկկողմ տնտեսական համագործակցության զարգացման, մասնավորապես՝ առևտրատնտեսական կապերի ընդլայնման հեռանկարները: Այդ համատեքստում կողմերը միմյանց ներկայացրեցին իրենց երկրում տնտեսական քաղաքականության մշակման մեթոդաբանության սկզբունքները: Առաջարկվեց դիտարկել տնտեսական քաղաքականության մշակման լավագույն փորձի փոխանակման Թվինինգ ծրագրերի իրականացումը:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին արտահանման աջակցման քաղաքականության գործիքակազմի և դրա կիրառման վերաբերյալ, քննարկեցին արտահանման ներուժ ունեցող ապրանքատեսակների և հնարավոր շուկաների ընտրության չափանիշները, լյուքսեմբուրգյան արտահանման լավագույն փորձը:

Լյուքսեմբուրգի էկոնոմիկայի նախարար Ֆրանց Ֆայոն հայտնեց իր պատրաստակամությունն աջակցել իր երկրում Թումո ստեղծարար կենտրոնի մասնաճյուղի հիմնմանը:

Զրուցակիցները քննարկեցին նաև բնապահպանական մի շարք ծրագրերում, այդ թվում՝ ջրային ռեսուրսների կառավարման և այլընտրանքային էներգետիկայի

ոլորտներում լյուքսեմբուրգյան ներդրումների ներգրավման, ինչպես նաև էներգախնայողության ուղղություններով լյուքսեմբուրգյան փորձի փոխանակման հնարավորությունը:

Ա.Արզումանյանը տեղեկացրեց նաև, որ հայկական կողմը կապ է հաստատել լյուքսեմբուրգյան Բնության և Անտառների ադմինիստրացիայի հետ (Nature and Forests Administration)՝ առաջարկելով սկսել համագործակցություն հայկական համանման կառույցի հետ: Լյուքսեմբուրգյան ընկերությունը պատրաստակամություն է հայտնել համագործակցել՝ ֆինանսական և աշխատակազմի համալրումից հետո:

Արմեն Արզումանյանը հանդիպում է ունեցել նաև Լյուքսեմբուրգի Առևտրի պալատի գործադիր տնօրենի հետ, որի ժամանակ փոխնախարարն առաջարկեց Հայաստանը դիտարկել ոչ միայն որպես շուկա, այլ նաև որպես դարպաս դեպի այլ երկրների շուկաներ: Տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում Ա.Արզումանյանը առաջարկեց լյուքսեմբուրգյան ընկերություններին Հայաստանը դիտարկել որպես բարենպաստ գործարար միջավայր ունեցող երկիր. արդյունքում լյուքսեմբուրգյան ընկերությունների համար կբացվեն նոր հեռանկարներ՝ համագործակցելով հայ գործընկերների հետ ձևավորել նոր արժեշղթաներ և ընդլայնել իրենց գործունեության աշխարհագրությունը:

Այցի շրջանակներում Արմեն Արզումանյանը հանդիպում ունեցավ նաև «Cargolux Airlines International S.A.» ընկերության ներկայացուցչի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին Հայաստանում ընկերության ներկայացուցչություն հիմնելու հնարավորությունը: Ա.Արզումանյանը ներկայացրեց Հայաստանը՝ որպես արևելք-արևմուտք կապող տարանցիկ կայան ծրագրի հեռանկարները՝ առաջարկելով աջակցություն նաև պետական մակարդակով:

Միջոցառման շրջանակներում ներկայացվեց նաև Հայաստանի տնտեսության և բիզնես միջավայրի վերաբերյալ շնորհանդես, որից հետո հայկական գործարար

պատվիրակությունը B2B հանդիպումներ ունեցավ Լյուքսեմբուրգի գործընկերների հետ: Համաժողովի ընթացքում քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

B2B հանդիպումների ընթացքում հայ գործարարները քննարկել են իրենց հետաքրքրող հարցերը, ինչպես նաև՝ բիզնեսը և միջազգային գործընկերային կապերի շրջանակներն ընդլայնելու հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել շարունակել քննարկումները համագործակցության ընդլայնման ուղղված աշխատանքների և ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

Լյուքսեմբուրգի էկոնոմիկայի նախարար Ֆրանց Ֆայոյի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ վերջինիս հրավիրել Հայաստան՝ վերոնշյալ ուղղություններով, ինչպես նաև այլ փոխադարձ հետարքրքություն ներկայացնող հարցերի քննարկման նպատակով:

Միջոցառման շրջանակներում գործնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել մի քանի լյուքսեմբուրգյան ընկերությունների հետ՝ ուսումնասիրել Հայաստանում բիզնես սկսելու հնարավորությունները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

11.10.2022թ.